

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

27 փետրվարի 2019թ.

Նախագահ՝ Մ. Ա. Չաքարյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

ՕՐԱԿԱՐԳ

1. 2018-19թթ. ուստարվա I կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփում:
/զեկ. Մ. Ա. Չաքարյան/
2. Ավարտական և կուրսային աշխատանքների կատարման ընթացքի քննարկում:
/զեկ. Մ. Ա. Չաքարյան/
3. Կրթական ծրագրերի բովանդակային, կառուցվածքային փոփոխություններ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ:
/զեկ. Մ. Ա. Չաքարյան/
4. 2018-19 ուսումնական տարվա II կիսամյակի ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցի հաստատում:
/զեկ. Մ. Ա. Չաքարյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, խորհրդի նախագահ Մ. Ա. Չաքարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Չաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Մ. Ա. Չաքարյանը: Նա ներկայացրեց 2018-19 ուսումնական տարվա I կիսամյակի I և II լուծարքային շրջանի առաջադիմությունը, ըստ որի „Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա,, մասնագիտության III կուրսի երեք ուսանողներ „Ֆունկցիոնալ անալիզ,, առարկայից ունեն կրեդիտի պարտք: Մնացած կուրսերում ակադեմիական պարտք չի գրանցվել:

Այնուհետև օրակարգի երկրորդ հարցի մասին զեկուցող Մ. Ա. Չաքարյանը խոսեց ավարտական և կուրսային աշխատանքների կատարման ընթացքի

մասին: Ավարտական և կուրսային աշխատանքների կատարումը ընթացքի մեջ են ուսանող և ղեկավար հանդիպումները իրականացվում է ըստ ժամանակացույցի:

Խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց օրակարգի երրորդ հարցը՝ կապված կրթական ծրագրերի բովանդակային, կառուցվածքային փոփոխությունների որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ:

Մշակվել և նորացվել են „Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա,, , „Բնահպանություն և բնօգտագործում,, մասնագիտության կրթական ծրագիրը:

Ընդգծելով, որ „Բնահպանություն և բնօգտագործում,, մասնագիտության կրթական ծրագիրը կազմելու համար ստեղծվել է աշխատանքային խումբ, ներառելով հետևյալ մասնագետներին.

1. Մինյան Գևորգ
2. Ալավերդյան Արթուր
3. Ամիրյան Անահիտ
4. Աթոյան Մհեր
5. Հովսեփյան Կարեն

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Կրթական ծրագրի ղեկավար Ա. Ս. Հովակիմյանը, „Բնագիտության և ընդհանուր մաթեմատիկայի,, ամբիոնի վարիչ Գ. Ս. Միմոնյանը: Նրանք ներկայացրեցին, որ կրթական ծրագրերը կազմվել են հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջները՝ համապատասխան ուսումնական գործընթացին: Ստեղծված աշխատանքային խումբը աշխատել է հավուր պատշաճի:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2019-20 ուստարվա կրթական ծրագրերը ըստ մասնագիտությունների:

Օրակարգի չորրորդ հարցի մասին ֆակուլտետի խորհրդի նախագահը ներկայացրեց 2018-19 ուստարվա II կիսամյակի ընթացիկ քննությունների, ստուգումների և ավարտական կուրսերի քննաշրջանի ժամանակացույցը, որը կազմվել է ուսումնական ծանրաբեռնվածության և ուսումնական գործընթացի ժամանակացույցի հիման վրա:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Գ. Վ. Գուլակյանը, Հ. Ս. Գասպարյանը և Ա. Ս. Հովակիմյանը: Նրանք համակարծիք էին ներկայացվածին և առաջարկեցին

հաստատել 2018-19ուստարվա II կիսամյակի ընթացիկ քննությունների, ստուգումների և ավարտական կուրսերի քննաշրջանի ժամանակացույցը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2018-19 ուստարվա 2018-19ուստարվա II կիսամյակի ընթացիկ քննությունների, ստուգումների և ավարտական կուրսերի քննաշրջանի ժամանակացույցը՝ ըստ մասնագիտությունների:

ՆԱԽԱԳԱՀ

Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ